929

1. Նոր երգ երգեցեք Տիրոջը,
Ով բոլոր երկիր, երգեցե՛ք Նրան,
Երգեցե՛ք Տիրոջը, օրհնեցե՛ք Նրան,
Օրհնե՛ք Նրա անունը հավիտյան:

Հիսուս անունը, Քրիստոս անունը,
Օրհնյալ անունը, Էմմանուե՛լ,
Փրկիչ անունը, Օծյալ անունը,
Օրհնյալ անունը, Էմմանուե՛լ:

2. Եկե՛ք ցնծությամբ երգենք Տիրոջ առջև,
Աղաղակենք մեր փրկության Վեմին,
Սաղմոսներով և ուրախ երգերով
Կանչենք Նրա անունը հավիտյան:

3. Քեզ գոհություն պիտի մատուցանեմ
Իմ ամբողջ կյանքով, իմ ամբողջ հոգով,
Ես միշտ պատրաստ եմ Քեզ դավանելու,
Կգովեմ Քո անունը հավիտյան:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025